

ՇՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Ս. ԶԱՏԿԻ ՏՕՆԻՆ ԱՌԻՅՈՎ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ
ՄԵԾԻՒ ՏՕՆՆ ԿԻՆԻԿՈՅ
ԱՆԹԻԼԵՍՍ - ԼԻԲԱՆԱՆ

Թիւ 187/63 Անթիլիաս, 8 Ապրիլ 1963

Ամենապատիւ

Տ. Եղիշեկ Ս. Արքեպիսկոպոս

Բարեխնամ Պատրիարք Հայոց Ս. Նրուսազեմի
Նրուսազեմ

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Հաւատարմութեան Ս. Յարութեան Տօնին առթիւ կը փութանք ներկայացնել Ձեզի, զինուորեալ Միաբանութեանդ եւ բարեպաշտ համայն ժողովրդեանդ մեր սրտազին շնորհաւորութիւններն ու լաւագոյն մաղթանքները:

Կ'աղօթենք ի բոլոր սրէ: Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ անասանութեան եւ մերազն բարեպաշտ ժողովրդեան բարօրութեան ու երջանկութեան համար:

Մաղբիլով Ձեզի քաջառողջ կեանք եւ եկեղեցւանուէր բեղուն գործունէութիւն, Մնամ ողջունիւ եղբայրական ջերմ սիրոյ

Աղօթակից՝

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Կարդիկոսական Տեղապահ
Մեծի Տանն Կիլիկիոյ

ԼԱՄՊԵԹ՝ ՊՅԱՆՏ

Դասիկ 1963

Ձերդ Ամենապատուութիւն եւ սիրելի եղբայր
ի Քրիստոս

Շնորհ եւ խաղաղութիւն ի Տեառնե:
Հօրէ մերի:

Եւ ի Տէր Յիսուս Քրիստոս

Քրիստոս յարեալ

Այս ուրախ պատգամով ողջունեց Տիրոջ հրեշտակը Մարիամ Մազաղիկեացին եւ միւս Մարիամը, որոնք խաշուած Յիսուսի գերեզ-

մանը եկած էին Յարութեան առաւօտը: Այս առաջին պատգամն է զոր Ս. Զատիկը բերէ համայն մարդկութեան:

«Մի երկնչի՛ք դուք, գիտեմ զի զՅիսուս զկաշեկեալն խնդրէք. Ձեռքս, քանզի յայտնաւ՝ որպէս ասացն. եկայք եւ տեսէք զՏեղի ուր կայր: Եւ վաղվաղակի երթայք ասացէք առակերտացն նորա՝ քեզ յարեալ (Մատթ. ԻԸ. 5-7):

Հրեշտակային այս ողջոյնն էր որ պատգամեց աշխարհին քեզ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ մեռած էր խաչին վրայ, յարութիւն առած էր, որպէսզի իր Աստուածութեան փառքը փայլի աշխարհի մարտեան մէջ: Մարդոց մեղաւոր հոգիները յաւիտեան կանգնեցնելու վրայ իր մահաբաժնով որդի լուսաւոր ճառագայթներով: Արժանեալ որդիներն ի վեր, ոչ ոք մեղաւոր եկած է Յիսուսի ներկայութեան, առանց ազդուելու իր սուր անձնաւորութենէն:

«Թեպէտ եւ Արդի է, ուստի ի չարչարանաց անցի զճնազանգութիւն: Եւ իբրեւ կատարեալ, եղեւ ամենայն ճնազանգելոյ իւրոց պատճառք վրկութեանն յաւիտեանի» (Եբր. Ե. 8-9):

Մենք որ ունինք իր չարչարաններուն նշանք մեր նակահանութեան՝ պէտք է նշանաւոր ըլլանք կատարելու իր կամքը եւ յայտարարելու բոլոր մարդոց իր յաղթանակին լուրը: Բաժանուած աշխարհի մը մէջ, մօրք եւ ապերշտանիկ՝ մարդոց մեղքերու պատճառաւ, պէտք է ցոյց տանք քեզ շնորհիւ այս լուրին նոյն այդ մարդիկը կը փրկուին, Աստուծոյ սիրոյն միջոցաւ, Յիսուս Քրիստոսի չարչարանին եւ իր Յարութեան ապահովութեան մատնութեամբ:

Այս օրի իբրեւ Քրիստոնեաներ, Արեւելի եւ Արեւմուտի, միացած են Տօնախմբելու Թագուհի այս հանդիսութիւնը, ցուցնենք մեր սերը առ Աստուած, ինչպէս նաեւ մեր պատրաստութիւնը հանդիպելու մեր հարազատներուն, միասին յայտարարելով մեր փրկութեան փառքը եղող աւետարանը: Արժանե-

«և եւ մեկ հաւատամք, վասն որոյ եւ խօսիմք իսկ: Զայս զիտեմք՝ երբ որ յարոյցն զՅիսուս, եւ զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ» (Բ. Կորնթ. Գ. 13-14):

Քրիստոս Յարեաւ իսկապէս, Ալեկուիա: Եղբայրական սիրով ի Քրիստոս եւ ողջունիւ:

Քենքրպրիի Արեւայիսկոպոս
Առաջինը եղիսկոպոսաց բոլոր Անգլիոյ

Ամման

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշեկ Արեւայ. Տեղեւեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Յարութեան Տօնի փառաւոր առիթով, կը ներկայացնեմ Ձերդ Ամենապատուութեան ստացին բաւեմադրութիւններ եւ լաւագոյն շնորհաւորութիւններ, աղօթելով առ Բարձրեալն Աստուած որ այս երջանիկ Տօնը բերէ մարդկութեան խաղաղութիւն, բարիք եւ հանգստութիւն:

ՀԱՊԷՍ ՄԱՃԱԼԻ
Բանակի Ընդհ. Հրամանատար

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշեկ Արեւայ. Տեղեւեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Կը շնորհաւորեմ Ձեր մեծ Տօնը եւ Ձերդ Ամենապատուութեան կը մաղթեմ առողջութիւն եւ երջանկութիւն:

ՊԱՀՃԱԹ ԹԱԼՀՈՒՆԻ

Լիզպոն

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշեկ Արեւայ. Տեղեւեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Խորապէս զգացուած Ձերդ Ամենապատուութեան զատկական շնորհաւորութիւններէն եւ օրհնութիւններէն, կը յայտնեմ Ձերդ Ամենապատուութեան մեր անկեղծ շնորհակալութիւնները եւ փոխադարձ շնորհաւորութիւնները Ձեզի, մեր Տիրոջ հրաշափառ յարութեանը առիթով:

ԱԶԵՐԻՏՕ ԲԵՐՏԻԿՈՕ
ԴԷՈՐԴ ԵՍԱՅԵԱՆ
ՌՕՊԷԼԻ ԿԻԻԼՊԷԿԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԴՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ
ՆԻԻ ԵՈՐՔ

Ամեն. Տ. Եղիշեկ Արեւայ. Տեղեւեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Ս. Յարութեան հրաշափառ տօնին առիթով, համայն ունիմ Ձերդ Ամենապատուութեան մատուցանելու Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչական Ժողովին եւ իմ շնորհաւորութիւններն ու բաւեմադրութիւնները, Ձերդ Ամենապատուութեան արեւատութեան եւ Ս. Յակոբեանց Պատ. Միաբանութեան բարձրութեան համար:

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Նախագահ

